

23.02.2023թ.
N2

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Ն. Միմիդյանին

Հարգելի պարոն նախարար

Մեր ընկերությունը ՀՀ Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների երևակման տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն համաձայն 18.01.2022թ.-ի N29/347 երկրաբանական ուսումնասիրության թույլտվության:

Երևակման տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների բնապահպանական կառավարման պլանին համաձայն աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդում փոշու արտանետումների մշտադիտարկում,
2. երևակման տարածքի հողերի քիմիական կազմ,
3. երևակման տարածքում կենսաբազմազանության մշտադիտարկում :

Ստորև ներկայացնում եմ 2022 թվականի ընթացքում Քարաձորի անդեզիտաբազալտների երևակման տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:


«Յանա Վարդանյան» ՓԲԸ
ունօրեն՝



(Handwritten signature)

Վ. Վարդանյան

(Handwritten notes)
Գեղարքունիքի մարզ
Գ. Թեղակեր, 577 հեռ. 098835444
isoyanandranik@yandex.ru



**ՄՇՏԱՐԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՍՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտար- կումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը ¹
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Երևակման տարածք	Անօրգանական փոշի (SiO ₂ 20- 70%)	Չափում ավտոմատ սարքավորման միջոցով	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.0065մգ/մ ³
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Երևակման տարածք	Քիմիական կազմ	Նմուշառում, նմուշի լաբորատոր վերլուծու- թյուն	2022 թվականի ընթացքում մեկ անգամ	Al 50089մգ/կգ, Si 126531մգ/կգ, P 2034մգ/կգ, Cl 750 մգ/կգ, S 8926մգ/կգ, K 12052մգ/կգ, Ca 12865մգ/կգ, Ti 4379մգ/կգ, V 285մգ/կգ, Cr 119մգ/կգ, Mn 1044մգ/կգ, Fe 42715մգ/կգ, Co <5մգ/կգ, Ni 80մգ/կգ, Cu 56մգ/կգ, Zn

¹Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՍԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները

					119մգ/կգ, As 10մգ/կգ, Se <5մգ/կգ, Rb 92մգ/կգ, Sr 297մգ/կգ, Y 23մգ/կգ, Zr 182մգ/կգ, Nb 12 մգ/կգ, Mo 180մգ/կգ, Ag 9 մգ/կգ, Cd <5 մգ/կգ, Sn <5 մգ/կգ, Hg <5 մգ/կգ, Sb <5մգ/կգ, W <5մգ/կգ, Pb 20մգ/կգ, Bi 8 մգ/կգ, Th <5մգ/կգ, U<5 մգ/կգ, LE 737123մգ/կգ:
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Նախատեսված չէ				
Աղմուկ և թրթռում	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելիքային պահեստարաններ	Երևակման տարածքում վառելիքային պահեստարաններ չկան				

1	2	3	4	5	6
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ	Երևակման տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Հանրավայրի տեղադիրքը. ՀՀ Գեղարքունիքի մարզի Քարաձորի անդեզիտաբազալտների երևակումը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի վարչական տարածքում, Մադինա գյուղից մոտ 10.5կմ հյուսիս, հյուսիս-արևմուտք, Սևքարի խմբի հրաբուխների ստորոտում և տեղադրված է Արևելյան Սևքար հրաբխի ստորին չորրորդական հասակի բազալտային լավային հոսքի մեջ, որի լայնքը կազմում է 1-2կմ և հոսել է դեպի հյուսիս-հյուսիս արևելք:

Երկրաբանական կառուցվածքը.

Շրջանի երկրաբանական կառուցվածքում առանձնացվում են երեք կառուցվածքաֆորմացիոն հարկեր՝ 1) էոցենի հարկ, 2) պլիոցենի հարկ, 3) չորրորդականի հարկ:

Էոցենը ներկայացված է միջին և վերին էոցենով:

Միջին էոցենը հանդես է գալիս ատորին, միջին և վերին հաստվածքներով և ներկայացված են տուֆիտներով, տուֆաավազաքարերով, տուֆակոնգլոմերատներով, կրաքարերով, ավազաքարերով, տուֆերով, տուֆաավազաքարերով և կավերով:

Հաստվածքը ներառում է նաև նշաքարային բազալտային անդեզիտների միջֆորմացիոն հոսքեր: Վերին էոցենը հանդես է գալիս տուֆաբրեկչիաներով, լավաբրեկչիաներով, անդեզիտային պորֆիրիտների և պիրոքսենային ու պլազիոկլազային միջֆորմացիոն հոսքերով:

Էոցենի կտրվածքի վերին մասերում հանդես են գալիս նաև վերին էոցեն-օլիգոցենի հիդրոթերմալ փոփոխված և քվարցացված դացիտների ու ռիոլիտների լավաներ ու հրաբխաբեկորային առաջացումներ, օբսիդիաններ:

Ստորին պլիոցենը ներկայացված է անդեզիտ-դացիտային կազմի տուֆաբրեկչիաներով, տուֆակոնգլոմերատներով, տուֆաավազաքարերով և բազալտների, անդեզիտների, դացիտների և գնդաձև ռիոլիտների միջֆորմացիոն հոսքերով:

Միջին պլիոցենը հանդես է գալիս անդեզիտներով, անդեզիտադացիտներով և անդեզիտաբազալտներով:

Վերին պլիոցենը հանդես է գալիս տուֆափշրաքարերով, տուֆակոնգլոմերատներով, անդեզիտադացիտային կազմի տուֆեր բազալտ-լիպարիտային կազմի ներֆորմացիոն ծածկոցներով:

Չորրորդականի հարկը ներկայացված է հիմնականում վերին և վերին չորրորդական-
ժամանակակից հասակի ապարներով՝ բալատներով, անդեզիտաբազալտներով, ամֆիբոլա-
յին անդեզիտներով և առաջին մակադոդախունային դարավանդների ճալաքարերով ու կո-
պիճներով:

Ժամանակակից առաջացումները հանդես են գալիս գետերի հովիտներում ալուվիալ-
դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներով՝ ավազներով, ավազակավերով և կավավազներով:

Երևակման բազալտները ուսումնասիրվելու են որպես հումք երեսապատման
քարի արտադրության համար 9479-98 ԳՕՍՍ-ի տեխնիկական պահանջներին համապատաս-
խան, իսկ թափոնները՝ որպես շինարարական ավազի և խճի հումք (ՀՍՍ ԳՕՍՍ 8267-95,
ՀՍՍ ԳՕՍՍ 8736-2014):

Երկրաբանահետախուզական աշխատանքների բնութագիրը.

Քարածորի անդեզիտաբազալտների երևակման հետախուզման մեթոդիկայի և
միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով երևակման երկրաբանական
կառուցվածքի առանձնահատկությունները, անդեզիտաբազալտների հետախուզվող ծածկոցի
մեղմաթեք տեղադրումը, տեղանքի լեռնատեխնիկական պայմանները, ինչպես նաև
Գեղհովիտի բազալտների հանքավայրի այլ տեղամասերում նախկինում կատարված
երկրաբանահետախուզական աշխատանքների փորձը:

Հետախուզական ցանցի խտությունն ընտրվել է համաձայն «Инструкция по применению
классификации запасов к месторождениям строительного и облицовочного камня» հրահանգի
հանձնարարականների, ըստ որի հետախուզվող տարածքն իր երկրաբանական և
մորֆոլոգիական առանձնահատկությունների, երկրաբանական հատկանիշների
փոփոխականության հաշվառմամբ վերագրվել է 1-ին խմբին:

Հետախուզական փորվածքների տարածական դիրքերը որոշվել են հաշվի առնելով
օգտակար հանածոյի հաստվածքի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնա-
հատկությունները, տեղանքի լեռնատեխնիկական պայմանները և ուսումնասիրության
թույլտվություն ստանալու համար ամրագրված տարածքի սահմանները:

Պայմանավորված երևակման ուսումնասիրության տարածքի երկրաբանական
կառուցվածքի առանձնահատկություններով, անդեզիտաբազալտի հետախուզվող ծածկոցի

մեղմաթեք տեղադրումով, ինչպես նաև տեղանքի լեռնատեխնիկական պայմաններով, նախատեսվում է հետախուզման ստորին սահման ընդունել 2440մ հորիզոնը: Ըստ այդմ հետախուզական հորատանցքերի խորությունները կկազմեն 8-42 մետր, կախված հորատման հրապարակների բացարձակ բարձրություններից:

Հետախուզական աշխատանքները կկատարվեն սյունակային հորատման 7 ուղղաձիգ հորատանցքերով ու մեկ մաքրվացքով և իհարկե օգտագործելով նաև փորձնական հանույթի բացահանքի երկրաբանական տվյալները:

Հետախուզական փորվածքների տեղադիրքը և հեռավորություններն ընտրվել են այնպես, որպեսզի հնարավոր լինի օգտակար հանածոյի պաշարներն ուսումնասիրել, եզրագծել և գնահատել արդյունաբերական կարգերով: Երևակումը կհետախուզվի 4 հետախուզագծերով, որոնք գրեթե համընկնում են ամրագրված տարածքի սահմանների հետ: Հետախուզագծերի միջև հեռավորությունը կազմում է 56-182մ, 3 հետախուզագծերի վրա հորատվելու է 2-ական հորատանցք, իսկ մեկի վրա՝ 1 հորատանցք ու մեկ մաքրվացք: Հետախուզական գծերի և փորվածքների միջև այսպիսի հեռավորությունները թույլ է տալիս երևակման հաշվարկված պաշարները գնահատել արդյունաբերական կարգով:

Հորատանցքերի հորատումը կատարվելու է Հորատող հաստոց UGB-1 VS (ZIL-131) մակնիշի ինքնագնաց հաստոցով, 132-96մ տրամագծով: Հանուկի ելքն օգտակար հաստվածքից պետք է լինի 80-85% սահմաններում: Նախատեսված 7 հորատանցքերի ընդհանուր ծավալը կկազմի 166.0 գծ.մ:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով կնմուշարկվեն 27 հանուկային նմուշներ և 4 մենաքարեր (2-ական փորձնական հանույթի բացահանքից և մաքրվացքից), որոնց միջին չափսերը կկազմեն 30×30×30 սմ: Հորատահանուկային նմուշների երկարությունը՝ 5մ միջակայքով:

Բազալտների քիմիական կազմը ուսումնասիրությունը կկատարվի 3 նմուշներով: Պետրոգրաֆիական նկարագրությունը կիրականացվի հորատանցքերից վերցված 2 նմուշներից պատրաստված շլիֆների հիման վրա:

Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից կատարվելու է 150.0մ³ ընդհանուր ծավալով փորձնական հանույթ թարմ

անդեզիտաբազալտներից: Լեռնազանգվածից մենաքարերի պոկումը կատարվելու է մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը: Մենաքարերը կենթարկվեն շտկամշակման ГОСТ 9479-98-ի տեխնիկական պահանջներին համապատասխան բլոկների ստացման նպատակով:

Մինչև երկրաբանահետախուզական աշխատանքների թույլտվություն ստանալը կատարվել է 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ, որի հիմքի վրա դաշտային աշխատանքների ավարտից հետո գործիքային եղանակով կտեղադրվեն բոլոր հետախուզական փորվածքները, երկրաբանական սահմանները և բացահանքի եզրագծերը:

Նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդիկական և ծավալները համապատասխանում են «Инструкция по применению классификации запасов к месторождениям строительного и облицовочного камня» հրահանգի հանձնարարականներին, ապահովում են օգտակար հանածոյի որակի և քանակի վերաբերյալ անհրաժեշտ երկրաբանական տվյալների ստացումը, և բավարար են հետագայում Քարածորի անդեզիտաբազալտների երևակման պաշարների հաշվարկման և երկրաբանատնտեսական գնահատման համար:

Շրջակա միջավայրի հակիրճ նկարագիրը.

Հանքավայրի շրջանը գտնվում է Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռնաշղթաների միացման մասում: Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հիմնականում հրաբխային առջացումներ, ինտրուզիվ և սուբհրաբխային ապարները գրեթե ներկայացված չեն:

Ըստ ՀՀՇՆ II-2-94 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթի դրույթների տեղամասի տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.2g հորիզոնական արագացման արժեքը:

Սողանքային երևույթներ երևակման տարածքում չեն արձանագրվել: Սոտակա սողանքային մարմինները գտնվում է երևակումից մոտ 5,5կմ հեռավորության վրա՝ Մադինա բնայավայրի տարածքում:

Կլիման չափավոր ցուրտ է: Տարածաշրջանում ցայտուն արտահայտված է բնակլիմայական պայմանների ուղղաձիգ գոտիականությունը. ցածրադիր վայրերում ջերմաստիճանը $5-10^{\circ}\text{C}$ -ով բարձր է և բարձրադիր վայրերի ջերմաստիճանից: Տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում 6°C է, բարձրադիր վայրերում՝ -4°C , հունվարինը՝ համապատասխանաբար -5°C և -14°C , հուլիսինը՝ մինչև $+16^{\circ}\text{C}$ և $+10^{\circ}\text{C}$: Օդի առավելագույն ջերմաստիճանը դիտվում է հուլիսին՝ $+32^{\circ}\text{C}$ -ից մինչև $+32^{\circ}\text{C}$, իսկ նվազագույնը հունվարին՝ -30°C -ից մինչև -42°C : Չնածածկույթի միջին բարձրությունը 15-25-ից 40-50սմ է, լեռնային վայրերում՝ ավելի քան 1մ է: Աշնան, ձմռան և գարնան ամիսներին տիրապետում են հարավ-արևմտյան քամիները՝ 25-30մ/վրկ: Մթնոլորտային տեղումների տարեկան միջինը՝ 300-500 մմ է:

Տարածաշրջանի գլխավոր ջրային արտերիաներից են Սևանա լիճ թափվող Մարտունի և Արգիճի գետերը:

Մարտունի գետը սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 3300 մ բարձրությունից: Երկարությունը 27,6 կմ է, ջրհավաք ավազանը՝ 101 կմ²: Գետահովիտը վերին հոսանքում V-աձև է, միջինում՝ տաշտակաձև: Մնումը հիմնականում ձնաանձրևային (58%) է, վարարումը՝ ապրիլ-մայիսին: Տարեկան միջին ծախսը 1,44 մ³/վ է: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

Արգիճի գետը սկիզբ է առնում Գեղամա լեռնավահանի Գնդասար լեռնազանգվածի հյուսիսային լանջից՝ 2600 մ բարձրությունից: Երկարությունը 51 կմ է, ջրահավաք ավազանը՝ 384 կմ²: Վերին հոսանքում անցնում է համանուն գոգավորության ճահճապատ տարածքով դեպի հյուսիս՝ առաջացնելով գետոլորաններ, Արմաղանի արևելյան ստորոտի մոտ հոսում է ոչ խոր ձորով, ապա թափվում Սևանա լիճը: Մնումը հիմնականում հալոցքային է (55%) և ստորերկրյա (36%) է, վարարումը՝ ապրիլ-հունիսին: Տարեկան միջին ծախսը 5,18 մ³/վ է, հոսքը՝ 163 միլիոն մ³: Ձմռանը սառցակալում է: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներառված է Մարտունի-Արծվանիստի հիդրոերկրաբանական ավազանի Մարտունի-Գետաշենի (Մարտունու) ճնշումային ջրահոսքի տարածքում:

Ջրահոսքը կապված է Մարտունի գետի հովտի հետ, որը վրածածկվել է Արմաղան հրաբխի լավային հզոր ծածկոցներով: Ջրահոսքի լայնությունը մոտ 5կմ է: Ըստ հիդրոերկրաբանական հորատանցքերի տվյալների՝ ժամանակակից և չորրորդական նստվածքների տակ տեղադրված են գրեթե ջրագուրկ պալեոգենի հրաբխային ապարները: Հորատանցքերով ջրային հորիզոններ հատվել են 50-55մ, 85-90մ և 210-230մ միջակայքում և կապված են պլիոցենյան պորֆիրիտների հաստվածքի հետ:

Քարածորի անդեզիտաբազալտների երևակման շրջանում զարգացած են լեռնային մարգագետնային ճմային, մարգագետնատափաստանային սևահողանման և դարչնագույն անտառային հողերը

Երևակման շրջանը կազմող լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում: Կլանող համալիրում Ca-ի և Mg-ի հետ մեկտեղ զգալի տեղ է զբաղեցնում նաև H-ը (մինչև 10-12.5, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 21-23 մ.էկվ 100 գ հողում): Այս հողերը պարունակում են նշանակալից քանակությամբ ազոտ և ֆոսֆորական թթու: Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տեղամասի շրջանին բնորոշ է հետևյալ բուսական գոտիների զարգացումը.

1. տափաստանային տարախոտա-հացազգային բուսականություն՝ *Festuca*, *Koeleria*, *Stipa*, *Artemisia*, *Astragalus* ցեղերի տեսակների մասնակցությամբ,
2. Լեռնային չորասեր թփուտներ և մացառուտներ *Amygdalus*, *Felziana*, *Cerasus incana*, *Rhamnus pallasii* և այլի մասնակցությամբ:

Տարածաշրջանին բնորոշ է լեռնատափաստանային գոտու ֆաունան, որը համեմատաբար միատեսակ է և աղքատ, ինչը պայմանավորված է նրա ձևավորման երիտասարդ հասակով: Անողնաշարավորներից այստեղ հանդիպում են ծղրիղներ,

մորեխներ, երկթևանիներ և բզեզներ, հերպետոֆաունայից առավել տարածված են մողեսները (Lacerta armeniaca, L. dahli, L. nairensis և այլն):

Թռչնաշխարհում գերիշխում են ճնճղուկանմանները և ճուռականմանները: Այս գոտին առավել բարենպաստ են թփուտային դաշտամկան, աղվեսի, կուտորայի, գայլի համար: Որոշ կաթնասունների առկայությունը տափաստանային գոտում կրում է սեզոնային, կերային կամ բազմացման հետ կապված ընտրողականությունը:

Քարածորի երևակման տարածքի տեղամասերում կաթնասունների բներ, որջեր չեն արձանագրվել:

Ուսումնասիրվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը՝ երևակման տարածքում հազվագյուտ, պահպանվող կենդանիների ապրելավայրեր հայտնաբերելու նպատակով: Երևակմանը մոտ գտնվող Գեղհովիտ, Մադինա և Լեռնակերտ բնակավայրերի և դրանց հարակից տարածքներում նման բուսատեսակների աճելավայրեր չեն արձանագրվել: Երևակման տարածքից ավելի քան 12կմ հեռավորության վրա՝ Մարտունի քաղաքի մոտ, հայտնի են հետևյալ հատուկ պահպանության կարիք ունեցող տեսակներ.

- Սևանյան գնայուկ – փոքր արեալով, միոցենյա մերձափնյա ֆաունայի ռելիկտ,
- Թուրքական կապտաթիթեռ – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ :

Արգիճի գետի միջին հոսանքում՝ երևակման տարածքից մոտ 5,5-6կմ հեռավորության վրա, հանդիպում է Սևանի բեղուն և Սևանի կողակը էնդեմիկ տեսակները, որոնք գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում

Քարածորի անդեզիտաբազալտերի երևակումը գտնվում է Սևանա լճի ջրհավաք ավազանում՝ «Աևան» ազգային պարկի սահմաններից մոտ 13կմ հեռավորության վրա:

Քարածորի երևակման տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա բնության հուշարձանը Արմաղան հրաբխային կոնն է, որը գտնվում է երևակումից մոտ 8կմ արևմուտք-հյուսիս-արևմուտք:

Բնապահպանական միջոցառումների բնութագիր.

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:
- Օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար :
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն :
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր :
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով ջրցանում երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների երկայնքով և փորձնական բացահանքի սահմաններում: Փոշենստեցման նպատակով և անձնակազմի կենցաղային կարիքների համար օգտագործվող ջուրը մատակարարվելու է պայմանագրային հիմունքներով մոտակա Գեղհովիտ բնակավայրից: Հորատումը կկատարվի հատուկ լուծույթների կիրառմամբ՝ փոշեզոյացումը նվազեցնելու/կրճատելու համար:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով :
- Խախտված լանդշաֆտի վերականգնում, ինչի նպատակով երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո փորձնական բացահանքի տարածքում կկատարվեն տարածքի բարեկարգման, հարթեցման աշխատանքներ, բացահանքի կողերի թեքության անկյունները փոքրացվելու են, նախքան փորձնական արդյունահանումը հանված և կուտակված հողային շերտը հետ է փովելու հարթեցված մակերեսի վրա:
- Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
- Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան :

- Անձնակազմի նախնական ուսուցում և հրահանգավորում :
- Հրդեհային անվտանգության կանոնների պահպանություն, տարածքում հրշիջման միջոցների առկայություն (բահեր, ավազ, տեխնիկական ջուր, կրակմարիչ):
- Թափոնների կառավարման միջոցառումների իրականացում:
- Շրջակա միջավայրի մոնիթրինգ՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշմամբ սահմանված կարգով: